Հ ա ս տ ա տ վ ա ծ է
Երևանի Վ. Բրյուսովի անվան
Պետական Լեզվաբանական Համալսարանի ռեկտորի
07.03.2006թ. 1Մ-51 հրամանով
Ս. Ձոլյան

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ, ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՎՃԱՐԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ

ԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը, հիմք ընդունելով «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման» Կանոնակարգը, սահմանում է պայմանագրային, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի ընդունելու ընթացակարգը, սկզբունքները և պայմանները:

2. Պայմանագրային, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի կարող են ընդունվել «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման» Կանոնակարգի II կետի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթակետերով նախատեսված պրոֆեսորադասախոսական բոլոր տարակարգերին համապատասխանող, ինչպես նաև այդ տարակարգերին ներկայացված պահանջները բավարարող անձիք:

II. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ, ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՎՃԱՐԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

3. Պայմանագրային, համատեղության և ժամավճարայաին կարգով աշխատանքի ընդունվող հավակնորդներին (այսուհետ՝ Հավակնորդ) ներկայացնում է ամբիոնը թափուր ժամերի առկայության դեպքում:

4. Հավակնորդի աշխատանքի ընդունելու հարցը քննարկվում է ամբիոնի նիստում: Արձանագրության քաղվածքը համապատասխան հիմնավորումով և հավակնորդի՝ սույն Կարգով սահմանված պարտադիր փաստաթղթերով ներկայացվում են Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

5. Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը փաստաթղթերի փաթեթը ուսումնասիրելուց հետո ռեկտորատի քննարկմանն է ներկայացնում հավակնորդի թեկնածությունը:

6. Ռեկտորատի դրական որոշման դեպքում հավակնորդը դիմում է գրում Համալսարանի ռեկտորի անունով և աշխատանքային պայմանագիր է կնքում տվյալ ուսումնական տարում ԵրՊԼՀ-ում դասավանդելու համար:

III. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ, ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՎՃԱՐԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7. Պրոֆեսորի պաշտոնում աշխատանքի ընդունվող Հավակնորդը, որպես կանոն, պետք է ունենա համապատասխան մասնագիտության դոկտորի գիտական աստիճան և/կամ պրոֆեսորի գիտական կոչում:

8. Դոցենտի պաշտոնում աշխատանքի ընդունվող Հավակնորդը, որպես կանոն, պետք է ունենա համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճան և/կամ դոցենտի գիտական կոչում:

9. Ավագ դասախոսի պաշտոնում աշխատանքի ընդունվող Հավակնորդը, որպես կանոն, պետք է ունենա բուհական աշխատանքի առնվազն 15 տարվա ստաժ և/կամ համապատասխան մասնագիտության գծով ավարտել են ասպիրանտուրա՝ հանձնելով թեկնածուական որակավորման բոլոր քննությունները:

10. Դասախոսի պաշտոնում աշխատանքի ընդունվող Հավակնորդը պետք է ունենա դիպլոմավորված մասնագետի կամ համապատասխան մասնագիտության գծով մագիստրոսի որակավորման աստիճան:

11. Դասախոսի պաշտոնում աշխատանքի ընդունվելու պարտադիր պայմանն է գերազանցության դիպլոմի առկայությունը կամ մասնագիտական առարկաների գերազանց և լավ (լավ գնահատականների նվազագույն քանակով) առաջադիմությունը:

12. Հավակնորդը դիմումին կից ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

- անձնական թերթիկ լուսանկարով
- անձնագրի պատճենը
- սոցիալական քարտի պատճենը
- աշխատանքային գրքույկի քաղվածքը
- ինքնակենսագրությունը
- գիտական աշխատությունների ցուցակը
- վավերացված դիպլոմի պատճենը
- վավերացված դիպլոմի միջուկի պատճենը
- վավերացված գիտական աստիճանը հաստատող փաստաթղթի պատճենը
- վավերացված գիտական կոչումը հաստատող փաստաթղթի պատճենը:

Հաստատված է համալսարանի գիտխորհրդի 01.03.06թ. h.7 նիստում